

ալ սեղան նստան: Անծանօթը իրենց մէջ-  
առելը առած, առաւ հացը, օրննեց և տուաւ  
իր բարեկամներուն, և յանկարծ անոնց աշ-  
քերը նոր լոյսով մը բացուեցան: Ատեն  
չունեցան զինք արգիլեու և ոչ ալ համ-  
բոյր մը տալու, վասնզի Յիսուս աներեւյթ  
եղած էր:

Կղէովաս և միւս ընկերը ալ չկրցան  
Եմմաւուս կենալ, երուսաղէմ վերաբար-  
ձան երը գիշեր էր արդէն: Անոնք, ճամ-  
բան գրիթէ ամօթահար և շիկնած իրարու  
կ'ըսէին:

— Յիրաւի, միթէ չէին այրեր մեր  
սրտերը, երը Ան կը խօսէր և մեզի կը բա-  
ցատրէր մարգարէները: Ահ, ինչո՞ւ չկըր-  
ցանք զԱյն ճանչնան այն ատեն, երը մեզի  
հեռնեցաւ և մինչև Եմմաւուս մեզի ըն-  
կերցաւ:

Կղէովաս և ընկերը պատմեցին ա-  
ռաքեալներուն և հաւատացեալ եղբայրնե-  
րուն իրենց հանդիպումը, և թէ Ան ինչ ը-  
սած էր ճամբուն երկայնքին և թէ՝ թնչպէս  
զինքը ճանչցած էին միայն այն ատեն՝ երը  
հացը բեկանած և իրենց էր առուած:

Եւ հոն բոլորը միաբերան գուշեցին և  
ըսին. — Այս, Տէրը յարեաւ և Սիմոն  
Պետրոսին ալ երեցաւ:

Դուկասի կողմէն պատմուած Եմմա-  
ւուսի ճամբորդներուն դրուագը արդարն  
գոհար պատմուածք մըն է: Այս աշխար-  
հիս մէջ անցաւոր է ամէն բան, ամէն  
բան պիտի անցնի: Մենք բոլորս յաւիտե-  
նական ճամբորդներ ենք մեծ և ընդարձակ  
ծովու մը վրայ, լսատափատին — Ս. Խա-  
չին — ապաւինած, հասնելու համար մեր  
փրկութեան նաւահանգիստը, որ է Տէրն  
մեր Յիսուս Քրիստոս:

Տէրը ըստ իր առաքեալներուն ածս  
ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչև ի  
կատարած աշխարհին: Այդ պատգամը քան  
գարերէ ի վեր կը մնայ իր կողմէն հիմնուած  
Ս. Եկեղեցին մէջ: Ան ամէն տեղ է, հոս,  
երուսաղէմի մէջ, Եմմաւուսի ճամբուն եր-  
կայնքին, իր հաւատացեալներուն և եր-  
կրպագուներուն մէջ: Գրիստոս եղաւ մար-  
մացումը իրական և մեծ կեանքի մը Ս.  
Պօլոս առաքեալ իրաւամբ կ'ըսէ սեթէ յա-  
րութիւն մեռելոց չիք . . . ընդունայն են  
քարոզութիւնն մեր . . . : Այս, Քրիստոս  
յարեաւ ի մեռելոց, կեանք և անմահու-  
թիւն պարգևեց բովանդակ մարդկութեան:  
Վասնզի Ան ճանուամբ զմահ կոխեաց:

ՊԱՐԴԵԼ ՎՐԴ. ՔՄԹԱՆՀՍԵԱՆ

## Հ Ա Յ Ա Վ Ա Ր Ա Յ Ա Վ Ա Ր Ա Յ

### Խ Ր Ա Ս Պ Ի Տ Ա Ն Ի

Մեղաւոր եմ, մեղաւոր, ես ինծ անծամբս վըկայեմ,  
Համարիմ թ'այլ մարդ չասէ, գեմ ես զիտեմ զինչ գործեր եմ:

Իմ չարերն եմ սերմաններ, հաւայ յաստենիս կու ճնձեմ,  
Մեռանիմ 'ւ անցնիմ գընամ, զայլն ի գենեանն վընարեմ:

Լուսատուն ինծ լրյա երես, որ զվատն ճանայեմ,  
Ես ի յարատն կու հայիմ, 'ւ ի յարենէ լացն եկեր եմ:

Քո ծեռացդ եմ ծեռագործ, ծեռն կու տաս որ վաստակեմ,  
Նա կու խըլեմ, զրկեմ, գողանամ, առնում չտամ ու հարկանիմ:

[Ո]տքա անցեր է առջեւ յերակ, որ հանապազ նոյն կու [թէ]լեմ,  
Այն ճանապարհն որ չէ բարի, յաւժար կ'երթամ զիս ցուցընեմ:

Քո տեսուդ արժան արայ, թէպէտ որ ես արժանի չեմ,  
Մի զբեկեալս կոտրեր, ես ի վաղուց ծունկս անել եմ:

Զիմ սիրուն ընկերակիցն զաւըն կինամ ու բամբասմ,  
Նայ այնաւը յամէն զիմաց, ծեռընկոտոր անյաջող եմ:

Խել Յովանես Թլպաւանցիս ցանկամ որ զքեզ Տէր տեսանիմ,  
Թէ հազար եմ մեղաւոր, զու ողորմած ես կու զիտեմ:

Զեւ. Թ. 1900

Հրատ. Ն. Եպս. ԾՈՎԱԿԱՆ